

Տեղեկագիր 1911|12 ուսումնական տարուայ Վրաստանի և
Իմերեթի Հայոց թեմի եկեղեցական-ծխական տարրական
դպրոցների:

Մեր դպրոցական գործի մասին չատ է խօսւում. գովում, բայց
աւելի պախարակում է նրա այս կամ այն կողմը: Այդ գնահատու-
թիւնները լինում են ընդհանրապէս թուլցիկ տպաւորութիւնների
վրայ հիմնուած, որովհետեւ դպրոցական գործը հասկացող անհատ-
ների կողմից մեր դպրոցը լուրջ ուսումնասիրութեան չէ արժանացել
մինչև այժմ: Ապացոյց դրան այն, որ մեր թեմական իշխանութիւննե-
րի իրաւասութեան տակ եղող դպրոցների մասին լուրջ տեղեկագրներ
դեռ չեն հրատարակուած, եթէ չհաշուենք այժմ մեր ձեռքի տակ
եղած Թիֆլիսի թեմի դպրոցների նոր տեղեկագիրը: Ուսումնարան-
ների համար բարենորոգութեան նոր փորձեր անելուց առաջ ան-
հրաժեշտ է նախ խնդրի եղած դրութեան հետ մանրամասնօրէն
ծանօթանալ. ինչպէս կարելի է նախօրօք որոշել, թէ մեր ծխական
դպրոցների համար քանի տիպի ծրագրներ պէտք է կազմել, եթէ
յայտնի չէ, թէ մեր կեանքը բնական եղանակով ինչպիսի տիպեր
է ստեղծել:

Այս տեսակէտից Վրաստանի և Իմերեթի հայոց թեմական
տեսուչ պ. Յ. Տէր Միրաքեանի աշխատասիրութեամբ լոյս տեսած
իր տեսչութեանը յանձնուած դպրոցների տեղեկագիրը միանգամայն
քաջալերութեան արժանի մի գործ է: Այժմ այդ թեմի դպրոցների
մասին «զգացումներով» խօսելուց կարելի է ազատուած համարել,
որովհետեւ մեր առաջ իրական պատկերներ և թուերի յաջորդում-
ներ են դրւած, որոնց մասին խօսելիս իմացական տուեալ բովան-
դակութիւնները աւելի տեղին կարող են համարւել:

Տեղեկագրից իմանում ենք, որ Վրաստանի և Իմերեթի թեմը
ունեցել է 1911|12 ուսումնական տարում 98 ծխական դպրոցներ:
Թիֆլիսում եղել են 13 դպրոց, իսկ Թիֆլիսի գաւառում երկու
հատ, Բորչալում 13, իսկ Ախալքալաքի գաւառի հայաբնակ 69
գիւղում եղել են միայն եօթը դպրոցներ: Ախալցխայի գաւառում 6,
Գօրու գաւառում 6, Դուշէթի գաւառում 2, Թելաւի գաւառում 1,
Սղնախի գաւառում 4, Ջաքաթալայում 1, Գանձակի գաւառում 9,
Ղազախի գաւառում 17, Բաթումի վիճակում 1, Արգունի շրջ-
անում 3, Քութայիսի և Շօրապանի գաւառում 4, Սուխումի վի-

ճակում 10, միւս նահանգներում 45: Ամբողջ թեմում կան զուտ քրիորդաց 7, զուտ աղայոց 6, խառն 85 դպրոցներ, բոլորը միասին, 98 դպրոցներ: Այս դպրոցներից 86-ը միդասեան են, 12-ը հրկդասեան:

Թեմի բոլոր դպրոցներում սովորում են աղջիկ 3500, աղայ 4772, միասին 8272 հոգի: Դպրոցներում պաշտօնավարում են ուսուցչուհիներ 112 հոգի, ուսուցիչներ՝ հոգևորական 19, աշխարհական 174, բոլորը միասին 305: Ուսուցիչների կրթական ցենզը. բարձրագոյն կրթութիւն 7. Գէորգեան Ճեմարան 8, Թեմական Գայիանեան և Յովնանեան դպրոցաւարտներ 142, Գիմնազիաւարտներ 2, Պրոֆեսիօնալ 31, միջնակարգից ցած 57:

27 դպրոցում դասերը սկսուել են հոկտեմբերին, 8 դպրոցում նոյն իսկ նոյեմբերին:

59 դպրոցներ ունին սեփական չէք, 50 դպրոցներ ունին գրադարաններ:

Թոշակներից զուամբւում է 37567 ուրլի, այլ մուտքերից 108005 ուրլի: Տարեկան ընդհանուր մուտքը լինում է 145572 ու: Ուսուցիչները ստանում են 125761 ուրլի:

Դպրոցների ներքին կեանքի մասին ևս տեղեկագիրը բաւական մօտ գաղափար է տալիս. 98-դպրոցներից 36 դպրոցում բոլոր բաժանմունքները միատեղ են պարապում, 21 դպրոցներում մի կամ երկու դոյզ դասարաններ միատեղ են պարապում: Ուրեմն դպրոցների մեծագոյն մասում աննորմալ դրութեան մէջ են դասարանները: Շատ քիչ դասարաններում ընթերցանութեան առանձին ժամեր կան, այնպէս որ մեծամասնութիւնը աւարտում է ընթերցանութեան զբաղմանը միանգամայն անվարժ: Թեմի դպրոցներում կան միայն 34 չորրորդ բաժանմունք, 10 հատ հինգերորդ և 1 հատ վեցերորդ բաժանմունք:

Դասական պիտոյքների տեսակէտից դպրոցները գտնւում են ամենախղճուկ վիճակի մէջ, նոյն իսկ 31 դպրոցների միակ դասական պիտոյքը զբաղաւորուել է: Թեմական տեսչի ենթադրութեամբ այդ թեմի դպրոցների դասական պիտոյքները մօտաւոր արժողութիւնը չի կարող անցնել 1480 ուրլուց: Եւ միշտ էլ երեակայել եմ, որ մեր դպրոցները իսկապէս խղճուկ վիճակի մէջ են, սակայն չէի կարող երեակայել, որ այդքան անտանելի վիճակի մէջ լինին նոքա, ինչպէս նկարագրում է թեմական տեսուչը:

Տեսչի ասածներից երևում է, որ դպրոցների ուսումնականը ևս փայլուն վիճակի մէջ չէ. ուսուցիչների մեծամասնութիւնը պարզ գաղափար չունի առարկաների նոր մեթոդների մասին, դաս են տալիս, ինչպէս պատահում է. ուսուցիչները իբրև դպրոցների հիւրեր են ընդունւում. մեծ մասը չի զբաղւում ինքնազարգացմամբ, նոյն իսկ նրանց չրջաններում չի տարածւում «Նոր—Դպրոցը» Տե-

սուշը թուում է բոլոր խոչընդոտները հետևեալ կերպ. «Ուսուցիչներին աննշան բացառութեամբ մանկավարժօրէն անպատրաստ լինելը, նրանց յարատե փոփոխութիւնը գիւղական դպրոցներում, նիւթական կարօտութիւնը, դպրոցական շէնքերի անյարմարութիւնները, դասագրքերի ուշանալը, մանաւանդ գիւղական դպրոցներում, տօնների չատութիւնը, գիւղական դպրոցներում պարապմունքները ուշ սկսելը և շուտ վերջացնելը — չափազանց մեծ խոչընդոտներ են դպրոցական ծանր գործի անսայթաք ընթացքի դէմ»:

Ուսուցիչներին ճնշող մեծամասնութիւնը 1—6 տարի ծառայողներն են: Ամեն մի ուսուցիչ շաբաթական միջին թուով պարապում է 22—25 ժամ. քիչ գէպքերում 30 ժամ: Տարեկան 400—500 ո. վճարող գիւղական ուսուցիչներ քիչ կան, առհասարակ 24—30 դասը 300—350 ո. է գնահատուում: 98 դպրոցներից մէկը վճարում է դասագին միջին թուով 40, մի ուրիշը 32 և մի երրորդը 30 ոտւրլի:

Ուսուցիչներին և հոգաբարձութեան «միջև բացարձակ պայքար կայ»: Հոգաբարձուները անտեղի յաճախ ճնշում են ուսուցիչներին, դպրոցը անձնական կրքերի արտայայտման վայր են դարձնում:

344 հոգաբարձուներից 119 հոգի տարրական կրթութիւն են ստացել, 58 հոգի գրագէտ են, 48 հոգի՝ անգրագէտ, 44 հոգի ստապել են միջնակարգ կրթութիւն, 27 հոգի, բարձրագոյն:

Ուսումնարանների ուսումնական, տնտեսական, վարչական հարցերի մասին խօսելուց յետոյ թեմական տեսուչը հետևեալ եզրակացութիւններ է հանում. որոնք ի նկատի պէտք է ունենալ դպրոցների բարեկարգման ժամանակ:

Մեր ծխական դպրոցների գործը կանոնաւորելու և աւելի արդիւնաւոր դարձնելու համար՝ կարեւոր են հետևեալ բարեփոխութիւնները:

1. Ամենակարեւորը դպրոցների նիւթական դրութեան բարելաւումն է: Փոխանակ գոյութիւն ունեցող դպրոցների պէս հաստատութիւնների թիւն աւելացնելու՝ պէտք է նախ նրանց աւելի նպաստել, և, ուր որ հնարաւոր է և յարմար կենսոգնական դպրոցներ բանալ լիակատար չորսամսայ և վեցամսայ դասընթացներով:

2. Գիւղական և օտարախօս երեխաներով դպրոցների համար պէտք է կազմել առանձին ծրագիր:

3. Հնարաւոր եղածին չափ պէտք է սահմանափակել մի քանի բաժանմունքների միատեղ պարապմունքը:

4. Ազատ ընթերցանութեան պարտադիր, վճարովի ժամեր սահմանել և հիմնել ու զարգացնել աշակերտական գրադարանները:

5. Դասական պիտոյքներ ձեռք պէտք է բերել՝ համաձայն

ծրագրի, կենտրոնական միջերանցում պատրաստի ժողովածուներ պահելով:

6. Դպրոցական շէնքերի անյարմարութիւնները պէտք է վերացնել:

7. Յատկապէս մանկավարժական գործի համար ուսուցիչներ պատրաստել լրացուցիչ մանկավարժական դասարաններով. գործին նուիրուածներին կատարելագործուելու միջոց տալ փորձնական դասերով, ամառային կուրսեր ուղարկելով, դպրոցական գրադարաններում նաև ուսուցչական թափանմունք բանալով: Նրանց դիրքը անհրաժեշտ է մնայուն դարձնել ռոճիկների նորմաներ սահմանելով. թոշակարկղ հիմնելով, ծերացած ուսուցիչներին այժմանից ցկեանս նպաստներ նշանակելով: Ուսուցիչների հրաժարուելու և նրանց հրաժարեցնելու դէպքերն անհրաժեշտ է օրինական միջոցներով, ըստ կարելոյն, սահմանափակել:

8. Քանի որ հոգաբարձուների միայն աննշան մասը ձեռնհաս է ուսուցչի գործունէութիւնը գնահատելու, բայց այս մասն էլ յարմարութիւններ չունենալով՝ միայն բացառիկ դէպքերում կարողանում է այդ խիստ պատասխանատու գործը կատարել, հոգաբարձուները պէտք է թեմական տեսուչների թոյլտուութեամբ ուսուցիչ հրաւիրեն ընդհանուր ուսուցչական ցանկից, Հրաժարեցնելու դիտաւորութիւնն իրագործելուց առաջ՝ նրանք պէտք է պատճառաբանուած զեկուցում ներկայացնեն թեմական իշխանութեանը և վերջինիս հաւանութիւնը գտնելուց յետոյ միայն՝ ուսուցչին այդ մասին յայտարարեն:

9. Մեր դպրոցների վարչական և վիճակագրական գործերը կարգի գնելու համար, կարևոր են հետեւեալ միօրինակ պատրաստուած մատենաները, որոնց ձևերը պէտք է տար ուսումնական խորհուրդը. ա) դասարանական մատեան, բ) ուսուցիչների ներկայութեան և բացակայութեան մատեան, գ) մանկավարժական և դ) հոգաբարձական ժողովների մատեան, ե) թեմական տեսչի դիտողութիւնների մատեան, զ) ել և մտից և է) շարժական գոյքի մատեաններ:

10) Դպրոցական գործը կարգաւորելու էական պայմաններից է կանոնադրութեան և ծրագրի վերամշակութիւնը՝ շատ արգելքների առաջն առնելու, թիւրիմացութիւններ վերացնելու համար: Այս բոլոր կէտերը կարելի է միանգամայն ցանկալի համարել. մեր դպրոցների յոռի դրութեանը վերջ տալու համար այլ ճանապարհներ որոնելը անհնար անօգուտ մի փորձ կարող է լինել: Այս բոլոր առաջարկները գլուխ բերելու համար կազմակերպուած և սիստեմով գործել է հարկաւոր: Թափ-թփուն գործելու հին և զանակը ներկայ աւելի բարդ և բազմակարիք կեանքում անհնար է

Նոյնօրէն կիրառել Մեր կարևորագոյն թեմերից մէկի թեմական տեսչին հարկաւոր է լսել Անհրաժեշտ է հրատարակել նաև միւս թեմերի դպրոցների տեղեկագրերը. այն ժամանակ մենք աւելի լիակատար գաղափար կունենայինք մեր բոլոր դպրոցների ներկայի մասին:

Գ. Էդիլեան

«Պատանի» ամսանախ V (VII) Թիֆլիզ 1942 թ. էջ 63.
դին. 20 կսպ.

Այս փոքրիկ ամսանախի բովանդակութիւնը չի պարզում աշխատակիցների և ընթերցողների շրջանը: Այստեղ նիւթերը բաժանուած են՝ քնարական, վիպական (և պատկերներ), քննադատական և պատմական մասերի: Մեծ հափով տեղ է տրուած քնարական և վիպական մասին, որոնց առթիւ և կկամենայինք խօսել:

«Պատանի» նախկին գրքերից աւելի պարզ ու որոշ յայտնի էր, որ այդ ամսանախերում պիտի մասնակցէին սկսնակ գրողներ գրական-գեղարուեստական շրջանակներում, սակայն այս գրքում բոլորովին անտեղի կերպով տեղ է տրուած նաև քննադատական և պատմական մասի: Եթէ ընդունենք, որ «Պատանի» ժողովածուն կարող է մեր սկսնակ գրողների գրական-գեղարուեստական շնորհքի ընդլայնման նպաստել և նոյնիսկ բախտ որոշել, չենք կարող սակայն ընդունել, որ այդպէս կարող է լինել նաև պատմական և քննադատական յօդուածներ գրողների նկատմամբ. «Պատանի» խմբագրութիւնը գրական թագնուած քանքարներին էլ ի յայտ կացուցանելով մեծ գործ արած կլինի. այս դէպքում ուժերի մի ուղղութեամբ լարումն ու գործադրութիւնն ամենանպատակայարմարն է և օգտակարը:

Քնարական մասի առաջին ոտանաւորը Խ. Բուրեանինն է, որ երգում է իր «մարած» սիրոյ սրբազան թրթիւրը.

«Տես, թառամել է այն վարդը ալուան

«Ու սուր փշերն են մնացել միայն.

Մենք այս և Ա. Իսահակեանի

«Ախ ալ վարդի, սիրոյ վարդի

«Չոր փշերը մնացին . . .

Ճօտիւրի մէջ գտնում ենք նմանութիւն և միանգամայն ընական